ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 02/61-29313 h «24» 05 2016 թ.

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի
ՊԵՏ ՊԱՐՈՆ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետին հասցեագրված Ձեր 12.05.2016 թվականի թիվ 01/04.1/1844-16 գրության տեղեկացնում եմ, որ ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 06.05.2016 թվականի թիվ 39/16 որոշման՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/40» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.05.2016 թվականին կայացրած որոշմամբ (պատճենը կցվում է) չեղյալ է համարել իր կողմից 12.04.2016 թվականի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով սահմանված՝ 3-7-րդ, 10-13-րդ, 16-րդ, 17-րդ, 28-րդ, 47-րդ, 50-53-րդ, 150-րդ, 191-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը, ուստի Երևանի քաղաքապետարանը օրենսդրական պահանջների համաձայն, վերը նշված գնման ընթացակարգի շրջանակներում armeps.am համակարգի միջոցով կատարել է վերագնահատում և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործություն, որի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով ընտրված մասնակիցների հետ կկնքվեն համապատասխան ապրանքների գնման պայմանագրեր:

Վ. ՆԻԿՈՅԱՆ

Կատ.՝ Գ. Զթրյան
Հեռ. 011 514-129